

Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ Ն

Ա Ռ

Ծ Ի Ծ Ա Ռ Ն Ի Կ

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Քո էր ուրեմըն անտէրունչ այս բունիկ՝
 Զոր այս երգին խորշ, — առաջին մըմնելուս —
 Տեսի թափուր, եւ աչք իմ՝ արկ արտասուս .
 Արտասուս, զի յիշեցի ես արխուր՝
 Որ պանդըխտիս ալ բոյն սյսպէս է թափուր :

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Ո՛հ, յինէ մի հարթչիր, փութան քո բունիկ .
 Յիս՝ բարեկամ մի գըտանես եւ ընկեր,
 Նըման քեզի պանդուխտ եմ ես, չես տեսներ .
 Պանդուխտ, գիտեմ թէ զինչ քաշէ սիրտ կարօտ,
 Պանդուխտ, գիտեմ պանդըխտութեան ցաւ մեռտա...:

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Երանի քեզ, ահա գըտեր քո բունիկ .
 Պանդըխտութեան քո ժամանակ՝ լըցաւ կարծ .
 Մոռցիր վըշտերն ու ճըռուողէ նորագուարճ .
 Ի՛նձ թող բզլիշտ՝ որ ս՛հ գիտեմ ոչ բընաւ
 Թէ երբ եւ իմ՝ պանդըխտութեանս է զըրաւ :

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Քո յոյս գարունն էր որ գըտնես քո բունիկ .
 Իսկ ինձ՝ ձըմեռն է յարատեւ ու ձըմեռ,
 Հայրենեացս հետ կորեաւ գարունս վարդաբեր .
 Վա՛հ, պանդըխտին մութ կերելի լոյս՝ օտար,
 Օղ՝ անախորժ, ջուրը՝ լեղի, հացը՝ քար...:

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Ա՛խ, երբ դառնաս նորէն յանուշ այս բունիկ՝
 Պիտի լըսես իմ՝ բարեւիս գողըռջ ձայն՝
 Թէ՛ պանդըխտիս գըտնես խըրճէթ՝ լուս, ունայն...
 Թըռիւր յայնժամ՝ գերեզմանին իմ հողիկ,
 Խեղճ պանդըխտին բեր հայրենեաց մի խապրիկ...:

Ծիծառնիկ, ծիծառնիկ: